բերն սկսում են հարսնացուին փող ընծայել, և այդ գործողութիւնը կոչւում է «երես տեսանք»։

Շիրակում հարսնախօսութիւնից մի քանի շաբաթ յետոյ թէ քաղաքում և թէ գիւղերում սովորութիւն կայ «հարսատես» անելու։ Այս դէպքում հարսնացուին, բացի նշանադրութեան փողից ու մատանուց, փեսայի ազգականները շարքով ոսկի, արծաթեղէն ու այլ և այլ իրեր ընծայ են տանում [1])։

Այլ տեղերում նոյն սովորութիւնը կատարւում է աւելի ընդարձակ գոյնով։ Վրաստանի շատ կողմերում հայերը սովորութիւն ունին հարսը եկեղեցուց տուն բերելուն պէս ներս տանել սենեակը, խաչեղբայրը բարձրացնում է նրա երեսի քողը և հրաւիրում է ամենքին գալ տեսնել հարսի երեսը, այսինքն տալ ընծաներ. ուստի այդ սովորութիւնն էլ կոչւում է երեսատես կամ երես տեսակ [2])։

Շատ հայաբնակ գաւառներում սովորութիւն կայ, որ հարսը, եկեղեցուց՝ պսակադրութիւնից դառնալով, չի մտնում փեսայի տունը և չի նստում, մինչև որ սկեսուրը կամ փեսայի ազգականները չմօտենան և մի մի արծաթէ կամ ոսկէ դրամ տալով, ներս չհրաւիրեն։

Ակնայ մէջ նշանադրութեան ժամանակ, երբ երկար սակարկութիւններից յետոյ աղջկայ ծնողները տալիս են վերջնական համաձայնութիւնն իրենց դստեր ամուսնութեան համար, փեսացուն, սորա ծնողներն ու ազգականներն ընծայում են արծաթէ կամ ոսկէ դրամներ հարսնացուին, որ հերթով մօտենում է ամենքին և ձեռքերը համբուրում [3])։

Այնուհետև աւելորդ չի լինիլ այստեղ յիշատակել մի այլ տեսակ ընծայաբերութիւն, որ անում է փեսան հարսնացուին, երբ սոքա առաջին գիշերն առանձնանում են

---

[1]) Էմինեան Ազգագրական Ժողովածու, հատ. Ա. եր. 240.

[2]) Վահան վրդ. Բաստամեան՝ Դատաստանագիրք Մխ. Գոշի տես. Ծանօթութիւն երես 290.

[3]) Բիւրակն—Կ. Պոլիս 1900 թ. № 23

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան